

ելաւ երկայն և նեղ երրորդ փոս մը, միւսներէն սա տարբեւրութեամբ որ բռնաբարուած չէր: Հինգ չափահասներու մարմինները հոն կուտակուած էին: Գերեզմաններու այս ամբողջութիւնը ծածկուած էր սալաքարերով որ ասոնք իսկ ծածկուած էին կէս մէթր միջակ թանձրութեամբ փրածքներով:

Այս գիւտին նշանակութիւնը ոչ ոքի մտքէն պիտի վրիպի, վանքին ննջեցելոց գերեզմանին վերապահուած մեռելամատրան ներկայութեան առջեւ կը գտնուինք անտարակոյս. և Պ. Շիթթի այս մատուռը կը նկատէ 473 ին Փիտոս սարկաւազին կողմէ շինուածը որ պիտի ընդունէր վանքին հիմնադիրին ոսկերոտիքը: Իրապէս հիւրեղ Սկիւթուպոլսեցիին նկարագրութեան քսանի մը մանրամասնութիւնները ըստ բաւականի կը համապատասխանեն պեղումներու արդիւնքին, մասնաւորապէս մատուռին մէջտեղէ փոսին, ինչպէս նաև սեղանին առջեւ առանձնաշնորհեալ գլրքբլուռն: Երկայնաձև մեծ գերեզմանը կրնայ ըլլալ վանքին վանահայրերուն և քահանաներուն վերապահուած մին այն գերեզմաններէն որոնց համար պատմագիրը մեզ կ'ըսէ թէ բաժնուած են սուրբին (Եւթիմիոսի) շիրմին երկու կողմերը: Սակայն հարաւի կողմը գերեզմանի բացակայութիւնը քիչ մը մեզ կը շփոթեցնէ, ինչպէս նաև սեղանին առջեւ մեծ խոռոչին ներկայութիւնը ու մատրան արեւելեան պատով ծածկուած երկու շիրմաները: Միւս կողմէն կատարելապէս չենք բաժներ մատենագիրին խանդավառութիւնը շինուածքի մը համար զոր ան կ'որակէ խիստ գեղեցիկ և խիստ մեծ: Նոյնպէս ո՛րք է հետք մնացած չէ այն տապանաքարէն՝ որ կը ծածկէր գերեզմանը, ոչ ալ արծաթեայ սափորէն և այն վանդակապատէն զոր Երուսաղէմի պատրիարքը նուէր տուած էր սուրբին մարմնոյն յուղարկուորութեան առիթով: Բայց այն ծայրայեղ աւերեալ վիճակը՝ որուն մէջ գրտնուած է մատուռը Բ. դարու երկրորդ կիսուն, հետեւանքովը վանքին կործանումին և հետագայ աւարառութեանց՝ որ ըստ բաւականի լուր կը բացատրեն աւերակներու կողոպտիչներէն յափըշտակուած թանկագին առարկաներու աներևութացումը: Գուցէ ի նախատեսութիւն տազնապնիրու, վանականները բացած են գերեզմանը և ապահով տեղ մը պահած են իրենց հօր նըշխարները: Վերջապէս, անտարակոյս պէտք է նկատել հիւրեղ Սկիւթուպոլսեցիին Պատմութեան մէջ չափազանցութեան բա-